

## ՔՐԴԱՅԱԾ ՀԱՅԵՐԸ

ՔՐԴԱԽՈՍ ՀԱՅԵՐՆ ԵՒ ՀԱՅԱԽՈՍ ՔԻՒՐԳԵՐԸ.  
ԽԱՖԻՐՈՒԹԻՒՆԸ. ԹՐՔԱՅԱԾ ՔԻՒՐԳԵՐԸ

Մեծամասնութիւն կը կազմեն քրդացած հայերը ու թըր-  
քացած քիւրդերը, որոնց մասին եթէ կարելի չէ ճիշտ հաշիւը  
տալ, բայց շատ դիւրին է օրինակներ և ասպացոյցներ բերելը:

Պօհտանի քիւրդերու մեծ մասը կարելի է քիւրդացած  
հայեր համարել: Դըհի գաղթականութիւնը որ ցրուած և  
աւելի ղետեղուած է Վանի մէջ՝ կորսնցուցեր էր իր մայրենի  
լեզուն. անոնք քրդախօս էին:

Շատ Դըհեցիներ կան այժմ, որ հակառակ այնչափ երկար  
տարի Վան և հայերու մէջ ապրելուն՝ չեն կրնար քանի մը  
բառ անգամ հայերէն խօսիլ:

Ասոնց շատերու Հայութիւնը կը ճանչցուէր, առաջին ան-  
գամ քրիստոնէական ծիսական նշաններէն (օրինակ խաչակնքել  
գիտնալէն և այլն). երկրորդը՝ այն ուժեղ գիտակցութիւնէն՝ որ  
իրենք հայեր են:

Այս գաղթականութիւնը եթէ մասամբ հալածանք մը  
եղաւ, մասամբ մ'ալ ունեցաւ իր օգուտները, որ անոնք  
փրկուեցան իրենց ազգութիւնը կորսնցնելու վտանգէն:

Ասոնք որ հայ կեդրոններէ հեռու՝ շարունակաբար ապ-  
րած են քիւրդերու հետ, ու լեռնական կիանքի մէջ իրենց  
աղքատութեամբ և դանազան պատճառներով չեն կրցեր ունե-  
նալ դպրոց, նոյնիսկ քահանաներ՝ եկեղեցական արարողութիւն-  
ներու համար, յարաբերութիւններէ խստաւ ընդհատուած և  
չատ մը ծանօթ պատճառներով քրդացեր են:

Իրենց ազգի ու հաւատալիքի նշմարները պահեր են մի-  
այն քանդուած եկեղեցիներուն, քարերուն, ուխտի երթալով՝  
առանց ի հարկէ ո՛ր և է ծիսակատարութեան, այլ միայն հաց  
ու փոխինդ ուտելու ու սառ ջուր խմելու՝ պոռոտի ու այցի  
ձևով: